ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N4

ՍՀՀ-ԳՀԱՊՁԲ-19/10 ծածկագրով գնանշման հարցում ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

Ք. Սևան

19.04.2019թ.
Ժամը 13:30

Հանձնաժողովի անդամներ՝ Վարդուհի Վարդանյան
Մարի Սիմոնյան
Ռոմելա Հարությունյան

Գնումները համակարգող՝ Լանա Դավթյան

ՍՀՀ-ԳՀԱՊՁԲ-19/10 ծածկագրով հանձնաժողովի նիստի օրակարգը հաստատելու մասին

1. 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացված ապրանքների ամբողջական նկարագրի համապատասխանությունը սույն հրավերի պահանջներին գնահատելու մասին.
2. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ տրամադրած տեղեկատվությունը գնահատելու մասին:
3. Ընտրված մասնակից հայտարարելու մասին:
4. Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

1. 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների կողմից ներկայացված ապրանքների ամբողջական նկարագրի համապատասխանությունը սույն հրավերի պահանջներին գնահատելու մասին.

1.1 ՍՀՀ-ԳՀԱՊՁԲ-19/10 ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգին <<Պետրոսյան Հոլդինգ>> ՍՊԸ-ն, «Արմեն Զաքարյան Գագիկի» Ա/Ձ-ն, «Մեծ Ծիածան» ՍՊԸ-ն, «ԷՄ ԷՄ» ՍՊԸ-ն և «Քինգ Մանչ» ՍՊԸ-ն հայտով նախատեսված ապրանքների ամբողջական նկարագիրը ներկայացրել են հրավերով սահմանված ժամկետում և կարգով:

1.2 **<<Պետրոսյան Հոլդինգ>> ՍՊԸ-ի, «Արմեն Զաքարյան Գագիկի» Ա/Ձ-ի, «Մեծ Ծիածան» ՍՊԸ-ի և «ԷՄ ԷՄ» ՍՊԸ-ի** կողմից ներկայացված առաջին տեղը զբաղեցրած մասնակցների կողմից առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագիրը համապատասխանում են սույն հրավերի պահանջներին:

«Քինգ Մանչ» ՍՊԸ-ի կողմից ներկայացված առաջին տեղը զբաղեցրած մասնակցների կողմից առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագիրը համապատասխանում է սույն հրավերի պահանջներին, բացառությամբ առաջին տեղը զբաղեցրած մասնակցների կողմից առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրի /հավելված 6.1/ ծագման երկրի սյունակի, որտեղ «Քինգ Մանչ» ՍՊԸ-ն մեկ ծագման երկիր նշելու փոխարեն նշել է՝ մի քանիսը:

Հաշվի առնելով վերոգրյալը և ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ-ի N526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման կարգի>> 47-րդ կետով հանձնաժողովը որոշեց մեկ աշխատանքային օրով կասեցնել

գնահատող հանձնաժողովի նիստը, որի մասին էլեկտրոնային եղանակով տեղեկացնել **«Քինգ Մանչ» ՍՊԸ-ին՝** առաջարկելով մինչև կասեցման ժամկետի ավարտը՝ 23.04.2019թ-ի ժամը 12:00 շտկել անհամապատասխանությունը:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

2. ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի կողմից 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների վերաբերյալ տրամադրած տեղեկատվությունը գնահատելու մասին:

2.1 Հանձնաժողովը ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017թ-ի N526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման կարգի>> 43-րդ կետի 3-րդ ենթակետով 15.04.2019թ-ին էլեկտրոնային փոստի միջոցով ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե հարցում է ուղարկել 1-ին տեղ զբաղեցրած մասնակիցների՝ **<<Պետրոսյան Հոլդինգ>> ՍՊԸ-ի, «Արմեն Զաքարյան Գագիկի» Ա/Ձ-ի, «Քինգ Մանչ» ՍՊԸ-ի, «Մեծ Ծիածան» ՍՊԸ-ի և «ԷՄ ԷՄ» ՍՊԸ-ի՝** հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների վերաբերյալ: ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեն ՀՀ կառավարության 04.05.2017թ-ի N526-Ն որոշմամբ հաստատված <<Գնումների գործընթացի կազմակերպման կարգի>> 44-րդ կետով սահմանված ժամկետում՝ հարցումը ստանալու օրվանից 3 աշխատանքային օրվա ընթացքում տրամադրել է հարցման մասին տեղեկատվությունները, համաձայն որի **<<Պետրոսյան Հոլդինգ>> ՍՊԸ-ն, «Արմեն Զաքարյան Գագիկի» Ա/Ձ-ն, «Մեծ Ծիածան» ՍՊԸ-ն, «ԷՄ ԷՄ» ՍՊԸ-ն և «Քինգ Մանչ» ՍՊԸ-ն** հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորություններ չունեն:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

4.Հանձնաժողովի հաջորդ նիստի անցկացման օրը, ժամը և վայրը որոշելու մասին.

4.1 ՀՀ ԱՆ <<Սևանի հոգեբուժական հիվանդանոց>> ՓԲԸ-ի ՍՀՀ-ԳՀԱՊՁԲ-19/10 ծածկագրով ընթացակարգի հաջորդ նիստը հրավիրել 23.04.2019թ.-ին ժամը 12:00, ք. Սևան Կարմիր Բանակի 68 հասցեում, ֆինանսական բաժնի վարչական շենքում:

Ընդունվել է որոշում՝ կողմ՝ 3, դեմ՝ 0:

Հանձնաժողովի անդամներ՝ Վ. Վարդանյան

Մ. Սիմոնյան

Ռ. Հարությունյան

Գնումների համակարգող՝ Լ. Դավթյան